ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԼԵՒՈՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐՈՒՑՅԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ
(ասպվածաբանական էջյուդ)

«Վախճանաբանություն» եզրը ծագել է հունարեն esxatos բառից, որ նշանակում է «վերջին» կամ «եզրափակիչ»: Ընդհանրապես, առանձնացվում է երկու տեսակի վախճանաբանություն՝ անհատական եւ ընդհանրական՝ ողջ մարդկության համար: Ընդհանրական վախճանաբանությունը բովանդակում է «Աշխարհի վախճանը» կամ «Վերջին իրադարձությունները»: Վախճանաբանության այս բաժնին է պատկանում այստեղ ներկայացվող՝ **ննջեցյալների հարուցյալ մարմինների հարցը**:

Մեռելների հարություն ասելով հասկանում ենք մեռած մարմինների հառնելը, եւ Աստծու զորությամբ ու ներգործությամբ նրանց միավորումն իրենց հոգիներին: Մեռելների հարության մասին առաջին վկայությունները Սուրբ Գրքից են. Դանիել մարգարեն, խոսելով Վերջին օրերի՝ աշխարհի վախճանի մասին, ասում է. «Եւ բազումք ի ննջեցելոց ի հող յերկրի՝ յարիցեն, ոմանք ի կեանսն յաւիտենականս, եւ ոմանք ի նախատինս եւ յամօթ յաւիտենական» (Դան. ԺԲ. 2): Արդեն Նոր Կտակարանում Պողոս առաքյալը խոսում է այն մասին, թե նա, ով հավատում է, որ Քրիստոս Հարություն է առել, պետք է հավատա նաեւ մեռելների հարությանը (Ա. Կորնթ. ԺԵ. 12): Ննջեցյալների հարության մասին մեզ հայտնեց նաեւ Քրիստոս. «զի եկեսցէ ժամանակ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա. Եւ եկեսցեն արտաքս՝ որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց. եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց» (Յովհ. Ե. 28-29): Հիմնվելով սուրբգրային այս տեղեկությունների վրա՝ Քրիստոսի Երկրորդ Գալուստից առաջ ննջեցյալների հարության գաղափարը դարձավ Եկեղեցու վախճանաբանական կարեւոր թեմաներից կարեւորագույնը:

Ըստ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու վախճանաբանության՝ Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակ տեղի է ունենալու մեռելների ընդհանրական հարություն, որի մասին Հավատամքն ասում է. «[Հաւատամք] Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց...»[1]: Նույն բովանդակությունն ունի նաեւ Տաթեւյան դպրոցի Հավատո հանգանակը. «Այլեւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան»[2]:

1 «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Ս. Էջմիածին, 2004, էջ 702:
2 Անդ, էջ 5:

Ննջեցյալների ընդհանրական հարությունը տեղի է ունենալու վերջին դատաստանից առաջ, այսինքն՝ Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակ. «[առաքեալքն] ի ժամանակի անդ ծանուցեալ զնոյն ձայն փողոյն, ի մահահանգիստ քնոյն յարուցեալք ի գարունն՝ զբերս բուսոցն իւրաքանչիւր հասելոցն տերեւիցեն: Զի այնուհետեւ յայն հասեալ գարունն՝ զիւրաքանչիւր սերմանեաց յարմատոյ անտի զտեսիլ կերպարանացն բերիցեն»[3]:

ա. Քրիստոսի Հարությունն իբրեւ բոլոր մարդկանց հարության նախատիպ.- Սուրբ Գրքում Պողոս առաքյալի վերոբերյալ խոսքից տեսնում ենք, որ Քրիստոս, ինչպես Իր երկրային կյանքում հանդես եկավ իբրեւ օրինակ մարդկանց համար, այնպես էլ Իր Հարությամբ ողջ մարդկության հարության նախատիպը ցույց տվեց, որ լինելու է աշխարհի վախճանին. «[Սա սահմանեցին]՝ հետեւելով առաքելական վկայությանը, թե ինչպես Քրիստոսը մեռելների միջից հարություն առավ, այդպես էլ մենք ենք կյանքի նորոգություն ստանալու»[4]: Եթե ընդունում ենք, որ մեր՝ մարդկային մարմինների հարության նախատիպը Քրիստոսի Հարությունն է, ուրեմն այն լինելու է նախկինին համապատասխան. «...իր սեփական մարմնի միջոցով մարդկային բնությանը շնորհեց հարության սկիզբը՝ իր զորությամբ հարություն տալով մարդուն»[5], «Քրիստոս՝ Աստծու Որդին, մեր փրկության համար մահացավ, որպեսզի մեզ անմահացնի անմահ կյանքի մեջ»[6]: Այսպիսով, Քրիստոսի Հարության շնորհիվ է տեղի ունենալու ողջ մարդկության հարությունը. «Եւ նա է գլուխ մարմնոյ, եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ» (Կող. Ա. 18) եւ «քանզի մարդով եղեւ մահ. եւ մարդով՝ յարութիւն մեռելոց» (Ա. Կորնթ. ԺԵ. 21): Այստեղից երեւում է, որ ննջեցյալների հարությունը եւս Աստվածային Փրկագործության մաս է կազմում, ուստի այն ունի ընդհանրական բնույթ՝ լինելու է ընդհանրական հարություն: Աշխարհի արարման սկզբից մինչեւ այդ օրերը եղած բոլոր ննջեցյալները հարություն են առնելու՝ առանց մեղավորի ու արդարի խտրականության (նաեւ նրանք, որոնք մահը ճաշակել են դեռ իրենց մոր արգանդում):

բ. Հոգիները Քրիստոսի Երկրորդ Գալուստից առաջ.- Ինչպես արդեն վերը նշեցինք, Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակ լինելու է ընդհանրական հարություն, որի ժամանակ հարություն են առնելու բոլոր ննջեցյալները. նոր՝ հարուցյալ մարմիններին են միանալու արդեն կայաններում սպասող հոգիները:

Քրիստոնեական ըմբռնումով մեզ տրված երկրային կյանքը ոչ միայն Աստծու սիրուց բխած պարգեւ է, այլեւ մի փորձաշրջան՝ «պանդխտության» շրջան (Ա. Պետ. Ա. 17), որի ընթացքում մարդը պետք է իր ապրած կյանքով ու հավատի գործերով նախապատրաստվի հանդերձյալ կյանքին, որով էլ, փաստորեն քրիստոնեական կյանքն իր լրումին է հասնում հանդերձյալում: Հավիտենական կյանքի երանությունը Աստծուց տրված մի կոչ

3 «Սուրբ Գրիգորի Վարդապետությունը», Ս. Էջմիածին, 2007, էջ 192:
4 **Ներսես Լամբրոնացի**, Մեկնություն Հավատամքի եւ Հայր մերի, Ս. Էջմիածին, 2007, էջ 55:
5 **Սուրբ Գրիգոր Նյուսացի**, Քրիստոնեական, թարգմ. Պ. Շահբազյան, Ս. Էջմիածին, 2007, էջ 90:
6 **Հովհան Մանդակունի**, Ճառեր, Ս. Էջմիածին, 2008, էջ 227:

է մարդկությանը՝ այս կյանքը բարի ընթացքով ապրելու եւ վերջին օրերին, առանց ամոթի, Տիրոջ առջեւ կանգնելու համար (Բ. Պետ. Ա. 13-25): Սուրբ Գրքում հստակ գրված է, որ յուրաքանչյուր մարդ Վերջին Դատաստանին ըստ իր գործերի պետք է հատուցում ստանա (հմմտ. Յակ. Բ. 1-13): Այսպիսով՝ մահվանից հետո մարմինը Տերունական խոսքի համաձայն վերածվում է հողի (Ծնն. Գ. 13), իսկ հոգին մտնում է հավիտենականության մեջ, որը կարծես թե ընդհատվում է Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակ տեղի ունեցող մեռելների ընդհանրական հարությամբ, որի ժամանակ մարմինը եւ հոգին վերստին միավորվում են:

Հարց է առաջանում, թե մինչ այդ ինչ է տեղի ունենում մարդկային հոգու հետ: Նախ ասենք, որ հոգիների երկու կարգավիճակ կարելի է զանազանել՝ հոգիները նախքան Քրիստոս, այսինքն՝ Քրիստոսի փրկագործ Խաչելություն եւ Հարություն, եւ հոգիները՝ Քրիստոսի Հարությունից հետո:

Քրիստոսի Խաչելությունից եւ դժոխքում երեքօրյա քարոզչությունից առաջ հոգիները փակված էին դժոխքում. «Վարդապետք սուրբք զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն՝ նախքան զՔրիստոս. եւ յետ Քրիստոսի եւ յետ դատելոյն: Նախքան զՔրիստոս, առհասարակ ի դժոխս... վասն պատժոյն Ադամայ»[7]: Իսկ որտե՞ղ էր դժոխքը: Եկեղեցական հայրերն այս հարցին պատասխանելով ասում են, որ ծովի եզերքին, երկրի ներսում կամ էլ խավարչուտ մի վայրում: Ի սկզբանե դժոխք գոյություն չի ունեցել, այն առաջացավ չարի անկումից հետո: Արեւմտյան պատկերացումների համաձայն դժոխքը, որպես սատանայի իշխանական աթոռ, ունի նաեւ բաժանումներ. ընդունված է չորս բաժանումների տարբերակը՝ ծովում, օդում, գերեզմաններում եւ քարայրներում կամ էլ՝

ա. ներքին դժոխք - առավել մեղավորների համար

բ. քավարան - ներելի մեղքեր ունեցողների համար

գ. լիմպոներ - չմկրտվածների եւ նրանց համար, որոնք մահացել են դեռ լույս աշխարհ չեկած

դ. վերին դժոխք - արդարների համար

Ըստ Սուրբ Գրիգոր Տաթեւացու՝ այս վարդապետությունն ուղղափառ չէ, քանի որ եղել է մեկ դժոխք, ինչպես որ մեկ դրախտ գոյություն ունի: Դժոխքն ու դրախտը հակակայաններ են, ուստի պետք է, որ նույնաչափ լինեն: Արքայությունը մեկ է եւ ունի բազում օթեւաններ ու փառքեր՝ երեսնավոր, վաթսունավոր եւ հարյուրավոր (հմմտ. Մատթ. ԺԳ. 8), նույնպես եւ դժոխքն ունի բազում տանջարաններ: Սուրբ Գրիգոր Տաթեւացին դժոխքում գտնվող հոգիներին երեք դասերի է բաշխում.

ա. Ներքին դժոխք, որտեղ գտնվում էին սատանան եւ չար ու ամբարիշտ հոգիները:

բ. Միջին դժոխք կամ «բանտ դժոխոց», որտեղ գտնվում էին միջակ մեղավորները, որոնք ունեին հավատք, բայց չունեին բարի գործեր կամ՝ հակառակը:

գ. Վերջին դժոխք կամ անջրդի գուր, որտեղ գտնվում էին անկնունք մանուկները:

7 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 603 (այսուհետեւ՝ Գիրք Հարցմանց):

Իհարկե այս ամենը գոյություն ուներ մինչև Քրիստոսի Խաչելությունն ու դժոխք իջնելը. «..հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիս» (Տաթեւյան հանգանակ): Քրիստոսի փրկագործ առաքելության մաս էր կազմում դժոխքում սատանայի կողմից կապված հոգիների ազատումը. «Ադամ մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոյն, եւ այլ ոչ կարէր բարձրանալ: Մինչ ի վերին կիտէն բանն Աստուած էջ ի ներքին կէտն. եւ ապա ել Ադամ ի վերին կէտն երկնից»[8]: Ադամից սկսած բոլոր հոգիները սատանայի կողմից կապված էին դժոխքում, մինչև որ Քրիստոս դժոխքում երեքօրյա քարոզչությունից հետո կապեց սատանային, ազատեց հոգիներին եւ քանդելով ավերեց դժոխքը. «զի թէպէտեւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով. Որով եւ ոգւոցն որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց» (Ա. Պետ. Գ. 19-20): Տերը խաչվելով նախ մեր մեղքերի դիմաց վճարեց եւ ապա հենց Ինքը բացեց Երկնքի դռները՝ մեզ համար առաջնորդ դառնալով. «Նախ՝ վասն վճարման պարտուցն լուծան կապանք դժոխոցն. որպէս ասէ Դաւիթ (զդրունս դժոխոց խորտակեաց). Երկրորդ՝ զի վասն բացման դրանց երկնից՝ լոյս ծագեաց ի բանտին ըստ Եսայեայ (որք ի կապանս էլ ելէք. եւ որք ի խավարի՝ յայտնեցարուք)»[9]: Քրիստոս իջավ մինչեւ Ներքին դժոխք, ուր եւ գտնվում էր Ադամը եւ որ ամենակարեւորն է՝ սատանան, որին եւ կապեց. «...գնեաց եւ կապեաց զհզօրն եւ քակեաց զամուրս նորա եւ ավար էառ զհոգիսն»[10]: Քրիստոսի կողմից դժոխքի ավերումից հետո հոգիներն իրենց ժամանակավոր ապաստանը գտնում են կայաններում: Կայանը ո՛չ դժոխք է եւ ո՛չ էլ դրախտ. այն միջանկյալ դիրք է գրավում, ուր հոգիներն սպասում են Քրիստոսի Երկրորդ Գալուստին, որի ժամանակ մարմնով պիտի հարություն առնեն եւ ապա՝ Դատաստան. «Եւ դարձեալ որպէս մարմինն ի հող հագուցեալ, եւ ապա հոգին ի կայանս հոգւոց. այսպէս ի յարութեան ի միասին պսակին եւ փառաւորին», «աւանդող հրեշտակն... առեալ տանի ի կայանս հոգւոց», «յետ Քրիստոսի մինչ ի կատարած ամենայն հոգիքն են ի կայանս հոգւոց յերկինս վասն ազատութեան եւ շնորհացն Քրիստոսի»[11]: Կայաններում գտնվող հոգիները ճանաչում են միմյանց. «Հոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ, ծնունդեամբ եւ գործով վաստակոցն... Իսկ չար հոգիքն ճանաչեն այնքան զչարս՝ վասն զի ըստ արժանեաց իւրոց տանջելոց են»[12]: Կայաններում սպասող հոգիները գիտեն այն ամենն ինչ տեղի է ունենում ողջերի հետ. արդարները բարեխոսում են, իսկ մեղավորները՝ ոչ, քանի որ նախանձ են: Կայանների գոյության տեսակետն են պաշտպանում նաեւ Ընդհանրական Եկեղեցու բազմաթիվ հայրեր՝ ինչպես օրինակ Իրինեոս Լուգդունացին, որի համաձայն, Դատաստանից առաջ յուրաքանչյուր հոգի ստանում է իր արժանիքներին համապատասխան կայան. ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս երեք օր մնաց սանդարամետում, այդպես էլ հոգիներն են սպասում կայաններում մինչեւ մեռելների հարություն[13]:

8 Անդ, էջ 508:
9 Անդ, էջ 503:
10 Անդ, էջ 505:
11 **Գրիգոր Տաթեւացի,** Ճմեռան հատոր, Երեւան, 1998, էջ 236-239:
12 «Գիրք Հարցմանց», էջ 685:
13 Տե՛ս **Метрополит Макарий Оксиюк**, Эсхатология Св. Григория Нисского, Москва, 1999, էջ 57:

գ. Հարուցյալ մարմիններ.- «Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան» (Ա. Կորնթ. ԺԵ. 42): Նոր մարմինները պէտք է լինեն անչարչարելի՝ ցավերից ու կրքերից զերծ, լուսավոր (Մտթ. ԺԳ. 43) եւ հոգեւոր՝ զերծ նյութի օրենքներից ու կապանքներից[14]: Անկարելի չէ Աստծու համար հողից վերստեղծել մարդկանց մարմինները, «Սակայն պէտք չէ իմրիիլ, որ այս յարուցեալ մարմինը հողեղէն է լինելու, որովհետեւ հողեղէնն ի վերջոյ ենթակայ է ապականութեան»[15]: Ս. Գրիգոր Տաթեւացին երկու տեսակ հարություն է տարբերակում՝ առաջին, երբ հարություն առնողը կրկին ենթակա է մահվան, ինչպես օրինակ Ղազարոսը եւ Ավետարաններում խոսվող մյուս հարուցյալները, եւ երկրորդ՝ հարություն առնողը պսակվում է անմահությամբ: Դատաստանից առաջ հարություն առնողը պսակվելու է անմահությամբ եւ, ըստ այսմ էլ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում (Դան. ԺԲ. 2), հարուցյալ մարմիններն անմահ են լինելու եւ «այս է պատճառ յարութեան, զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց կամ վասն սկզբնականին»[16]: Նախ ասենք, որ մարդկանց մարմինները տարբեր կերպերով ոչնչացել են եւ արդեն հարության ժամանակ չորս տարրերից են կազմվելու, քանի որ «նոքա ի տարերս լուծանին»[17]: Ենջեցյալների մարմինները հարություն են առնելու կատարելապես եւ անթերի անդամներով. «...զի անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ... զի Աստուած ի սկզբան բնութիւն Ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վերջին օրն անթերի պիտի նորոգէ»[18]: Ենջեցյալների հարությունը տեղի է ունենալու մի ակնթարթում եւ արդեն հարություն առած մարմիններին են միանալու կայաններում սպասող հոգիները, որովհետեւ առանց հոգու մարմինն անկատար է ու ոչ ամբողջական, եւ Դատաստանի ժամանակ միայն հոգին չի կարող պատասխանատու լինել հոգեմարմնավոր էակի համար. «...հոգիքն յելանել ի մարմնոյն, ո՛չ առժամայն առնուն արդեամբ զվարձս, այսինքն՝ զփառս եւ զտանջանս, որպէս ասացաք, այլ ի դատաստանին հանդերձ մարմնովն են առնելոց»[19]: Այս մասին խոսելիս Սուրբ Գրիգոր Տաթեւացին մեջբերում է Սուրբ Թադեոս առաքյալին. «հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են նոցա օթեւանք եւ բնակութիւն ի հանգստեան, բայց վարձ ոչ կարէ ընդունել առանց մարմնոյ. զի ոչ միայն հոգւոյն է վաստակն, այլեւ մարմնոյն»[20]: Վարդան Արեւելցին, հակադրվելով կաթոլիկների «Անհատական Դատաստանի» վարդապետությանը, ըստ որի «Եթե քրիստոնյան որեւէ մահացու մեղք գործեց, նա անմիջապես դատապարտվում է դժոխքի տանջանքներին, իսկ եթե մեղքերը ներելի են, ապա նրա հոգին անցնում է քավարան, որով հնարավորություն է ստանում մաքրվելու մեղքերից»[21], ասում է. «Ապա Քրիստոս

14 **Շնորհք արք. Գալուստեան**, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 64:
15 Անդ, էջ 63:
16 «Գիրք Հարցմանց», էջ 724:
17 Անդ, էջ 718:
18 «Գիրք Հարցմանց», էջ 725:
19 **Սիմէոն Կաթողիկոս Երեւանցի**, Պարարավճար, Երեւան, 2003, էջ 474-475:
20 «Գիրք Հարցմանց», էջ 691:
21 **Շահե արք. Աճեմյան**, Մեր Հավատքը, Երեւան, 2001, էջ 77-78:

յինչ է գալոց ի դատաստան, երբ ի գալստեան Նորա վճարեալ է ամենայն ինչ... այլ մեք գնահատաքրիլն այսպէս ասեմք եւ գնահատանգչիլն, թէ խոստովանութեամբ կատարեալ հոգիքն, թէ արդարք, թէ մեղուցեալք ի միում տեղւոջ կան. մեղուցեալքն տանջին միայն վախելով ու դրդմութեամբ... եւ արդարոցն խնդութիւն յուսով առաջիկայ երանութեան զոր ունին առ Աստուած, այն համարեալ է նոցա հանգիստ»[22]: Բացի այդ, հարությունը Դատաստանի համար է, իսկ այդ ժամանակ դատվելու են հոգին եւ մարմինը միասին՝ իբրեւ մեկ միություն. «Եւ յականարկել դատաւորիդ սասանի երկիր, բանին կնքեալ գերեզմանք. նորոգին հողացեալ մարմինք. եւ հոգիքն սլացեալ իբրեւ զարծուիս՝ անդր հասանեն, եւ զգենուն զանապական մարմինսն ի վայրկեան ժամանակի յիւրաքանչիւր տեղիս»[23], կամ «Որովհետեւ ջորացած ոսկորներն իսկոյն պատվելու են մկաններով ու ջլերով, կոճիկներով ու նյարդերով, ծածկվելու են մաշկով ու զարդարվելու վարսերով: Եւ նրանց հոգիներն ու կերպարանքներն իրենց են վերադառնալու»[24]: Վերը նշեցինք, որ բոլոր մարմինները, ինչպես Պողոս առաքյալն է ասում, հարություն են առնելու առանց ապականության, սակայն հարուցյալ մարմինները տարբերվելու են միմյանցից ըստ իրենց նախկին գործերի՝ չար կամ բարի. «Որովհետեւ եթե դու ննջես գերեզմանում քո բուրավետ արդարության հետ միասին, բուրումնավետ, անուշահոտ ծաղկի նման, ապա քո հարության ժամանակ քեզ հետ իսկոյն կբուսնի քո արդարությունը»[25]: Դանիելի մարգարեության վերը նշված հատվածի մեկնության մեջ Հովհաննես Ծործորեցին գրում է. «Որք ի Նեռնէն մեռան վասն Քրիստոսի, յառնեն ի կեանս յաւիտենականս, եւ որք այլ պատճառաւ մեռանին՝ ի նմանէ առաւել խնդրելով պատիւ կամ հաւանելով նմա՝ յառնեն ի նախատինս եւ յամաթս յաւիտենական»[26], ըստ այսմ Գրիգոր Տաթեւացին ասում է, որ արդարներն ունենալու են յոթ զարդեր, որոնցից զուրկ են լինելու մեղավորները. «Վասն այն հոգիք մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. եւ ի դրդմութիւն յաւիտենական... Եւ մարմինք նոցա լինին առաւել թանձր եւ ծանր եւ զարշելիք. որպէս ասդ»[27]: Մեր կարծիքով հարուցյալ մարմինների հենց այս տարբերությունն է ակնարկվում Թաղման կարգի մեջ, թե «Գաս հիացմամբ եւ ձայնիւ փողոյ. զարթուցանես զննջեցեալսն, յարուցանես զմեռեալս...»[28], եւ այստեղ «ննջեցյալները» շնորհներով պսակվածներն են՝ սրբերը, իսկ «մեռյալներ» է անվանում չար գործերի հետեւանքով արդեն հոգով մեռածներին: Հարուցյալները, ինչպես Պողոս առաքյալն է ասում, լինելու են անապական, հոգեւոր ու փառավորյալ: Ըստ արտաքին տեսքի նրանք բոլորն էլ նույնն են լինելու, սակայն տարբերվելու են հատկություններով ու կարողություններով:

Հարուցյալ մարմինների կատարելությունը դրսեւորվելու է նաեւ հասակի մեջ. բոլոր

22 «Գիրք թղթոց», Երուսաղէմ, 1994, էջ 663:

23 «Մաշտոց», Ս. Էջմիածին, 2001, էջ 573-574 (այսուհետեւ՝ Մաշտոց):

24 «Մուրբ Գրիգորի Վարդապետությունը», էջ 195:

25 Անդ, էջ 197:

26 **Վարդան Արեւելցի, Յովհաննէս Ծործորեցի, Թովմա Մեծոփեցի**, Մեկնութիւնք մարգարէութեանն Դանիէլի, Ս. Էջմիածին, 2007, էջ 292:

27 «Գիրք Հարցմանց», էջ 723:

28 «Մաշտոց», էջ 551:

մարդիկ հարություն են առնելու կատարյալ՝ երեսնամյա հասակում. «...որովհետև ծերն ու երեխան անկատար են, ուստի հարություն են առնում երիտասարդ հասակում, որ կատարյալ է: Երկրորդ՝ քանզի Ադամը երեսուն տարեկան արարվեց, եւ Քրիստոսը երեսուն տարեկանում հարություն առավ»[29]: Իր «Դատողությունների գրքում» այս մասին է խոսում ԺԲ. դարի կաթոլիկ ասպվածաբան Պետրոս Լոմբարդացին. «Երեխան, որը մեռնում է ծնվելուց անմիջապես հետո, հարություն կառնի այն տեսքով, ինչպիսին որ նա կլիներ, եթե մինչեւ երեսուն տարեկան ապրած լիներ»[30]: Իսկ նրանք, ովքեր դեռ մահը ճաշակած չեն լինի՝ ակնթարթում պիտի նորոգվեն ու նոր մարմիններ ստանան:

Այսպիսով, մեռելների հարությունը կազմում է կրոնի ու հավատքի էությունը, առանց հարության գաղափարի չկա եւ քրիստոնեությունը, իսկ ինքը՝ հարությունն ընկալվում է միայն հավատքի միջոցով. «Հարության նկատմամբ հավատը մեզ անդադար լցնում է լուսավոր հույսով: Այն, որ Ասպված կյանք է պարգեւում մեռելներին՝ այնպիսի ճշմարտություն է, որ միայն հավատքը կարող է ըմբռնել»[31]:

Ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վախճանաբանության, Քրիստոսի Երկրորդ Գալուստին տեղի է ունենալու բոլոր ննջեցյալների ընդհանրական հարություն: Աշխարհի սկզբից մինչ այդ օրերն ապրած բոլոր մարդիկ հարություն պետք է առնեն Տիրոջ հրամանով, չորս տարրերից պետք է վերակազմվեն մարդկային նոր հարուցյալ մարմինները, այսինքն՝ տեղի է ունենալու մի նոր արարչություն, որի առաջին օրինակը Քրիստոս ինքն էր՝ իր Հարությամբ: Այս իմաստով էլ քրիստոնեական վարդապետության երեք ամենակարեւոր հանգրվանները շղթայի պես միանում են իրար՝ արարչագործություն, հարություն եւ վախճանաբանություն:

29 **Գրիգոր Տաթեւացի**, Ոսկեփորիկ, Երեւան, 1995, էջ 181:
30 **Ալիստեր Ե. Մակ-Գրեթ**, Ասպվածաբանություն. հիմունքները, Ս. Էջմիածին, 2009, էջ 264:
31 **Ա. Ռ. Կայայան**, Հուսալ հակառակ ամեն հույսի, Երեւան, 1995, էջ 377: